



Վայրի կենդանիները՝ Երևանի կենդանաբանական այգում



Հոկտեմբերի 27-ին տեղի ունեցավ «Արևոտի» 4-րդ միջազգային բնապահպանական փառատոնի ամենագունեղ միջոցառումը՝ Կենդանիների դիմակահանդես-ընթացքը: Արդեն 4-րդ անգամ Երևանի փողոցները լի էին «վայրի» կենդանիներով: Արջերը, ձկներն ու օձերը, հովազներն ու սիրամարգներն ազատորեն քայլում էին Մատենադարանից դեպի Հյուսիսային պողոտա: Կենդանիների դիմակահանդես-ընթացքը գլխավորում էին 6 ազդեցիկ առյուծներ՝ Գերմանիայի Բրեմեն քաղաքից ժամանած սամբայի «Կոնֆուսաո» խումբը:

Գունագեղ քայլերի ընթացքում «Կոնֆուսաո»-ի սամբայի ուղեկցող խառնվեցին հայկական ավանդական դիմակների ու մասնակից փողային նվագախմբերի երաժշտության հետ: Կենդանիների դիմակահանդեսային հազուստները մասնակիցները պատրաստել էին թափոններից իրենց իսկ ձեռքերով՝ ցույց տալու, որ մարդկանց կողմից դեն նետվող կյուբերի մեծ մասը կարելի է վերամշակել դրանց երկրորդ կյանք տալով: Լավագույն հազուստի հեղինակներն ու լավագույն նվագախմբի անդամները կպարգևատրվեն արդեն 2014-ի փետրվարին:



Ամենամյա դիմակահանդես-ընթացքը, որն իրականացվում է Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) ՎիվաՍել-ՄՍՍ-ի հետ համատեղ, նպատակ ունի իրագրելու հանրությանը Հայաստանում ապրող վտանգված և վերացող կենդանատեսակների մասին: Դրանց թվում են Բեզոարյան այծը, Հայկական մուֆլոնը, Հայկական կրիան, Կովկասյան հովազը և շատ այլ կենդանատեսակներ: Նրանք բոլորը միացել էին իրենց ձայնը բարձրացնելու հանուն կենդանիների իրավունքների պաշտպանության:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս, Երևանի կենդանաբանական այգին չէր կարող չմիանալ այս ուրախ տոնին: Շքերթը գլխավորող «Կոնֆուսաո» խմբի անդամները, համերգը շարունակեցին Երևանի կենդանաբանական այգում: Առյուծներ հիշեցնող գունեղ, բեմական հազուստներով սամբայի վարակիչ ուղեկցող մեծ տոն պարզեցին այգու այցելուներին իսկ փոքրիկներին՝ երաժշտության և գույների անմոռանալի հիշողություններ:

Տեղի ունեցավ «Դմի օր» մրցույթը



Նոյեմբերի 16-ին Երևանի կենդանաբանական այգին կրկին մարդաշատ էր: Այս անգամ տեղի էր ունենում «Դմի օր» մրցույթը, որին մասնակցում էին 15 հանրակրթական դպրոցների աշակերտներ:

Երևանի կենդանաբանական այգին մասնակիցներից յուրաքանչյուրին տրամադրել էր մեկական դուր: Մրցույթի մասնակիցները մրգերով և բանջարեղենով տեղում պատրաստեցին գեղեցիկ ձևավորմամբ «տոնական» ուտեստներ՝ իրենց նախընտրած կենդանիների համար: Տասնամյա Արթուր Սարոյանյանը, Աղասի Խանջյանի անվան թիվ 53 հիմնական դպրոցի աշակերտ է, ով հաճույքով էր մասնակցում «Դմի օր» միջոցառմանը. «Ես քուրիկիս հետ պատրաստել եմ նապաստակ՝ գեբրի համար, քանի որ գեբրերին շատ եմ սիրում»:



75 հիմնական դպրոցի փոխտնօրեն Մարիետա Մխիթարյանը եկել էր մրցույթին մասնակցելու ութերորդ դասարանի աշակերտների հետ. «Երբ մենք ստացանք հրավերը շատ ուրախացանք, քանի որ մեր երեխաներն անմիջական շփում կունենան կենդանիների հետ: Այսօր ուղտայծի համար մենք գեղեցիկ ուտեստ ենք պատրաստել և մեզ հետ իր սիրած բանջարեղեններն ենք բերել»:

Մրցույթի ժյուրիի կազմում էին QSI Միջազգային դպրոցի տնօրեն Կարո Հոֆմանը, «Կանաչ արահետ» ՀԿ նախագահ Նունե Սարոյանյանը, Ամստերդամի «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու սոդունագետ Ջեննի Սպենսերը:

Ժյուրիի բոլոր անդամները խոստովանեցին, որ իրենց համար դժվար է եղել ընտրել լավագույնին: Բոլոր մասնակիցները պայքարում էին երեք՝ լավագույն նորարարական մոտեցում, լավագույն մտահղացում, «լավագույն ուտեստ»՝ անվանակարգերի համար:

Ժյուրիի անդամները միաձայն հաղթող ճանաչեցին Երևանի Սիամանթոյի անվան թիվ 162 հիմնական դպրոցի խմբին: Խումբն արժանացավ գլխավոր մրցանակին՝ հեծանիվի: Երկրորդ տեղը զբաղեցրեց Երեանի Խրիմյան Հայրիկի անվան թիվ 10 հիմնական դպրոցը, Իսկ երրորդ տեղը՝ Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 52 հիմնական դպրոցի սաները:

Բոլոր մասնակիցները ստացան Երևանի կենդանաբանական այգու «Ձու» մանկական ամսագիր և «Դմի օր» մրցույթի մասնակցության վկայական:

Նոյեմբերը Երևանի կենդանաբանական այգու համար արգասաբեր ամիս էր



2013-ի նոյեմբերին Երևանի կենդանաբանական այգում էին գտնվում միանգամից եվրոպացի երկու մասնագետներ: Նախ տասնօրյա այցով կենդանաբանական այգի էր այցելել Լեհաստանի «Չամոշ» կենդանաբանական այգու տնօրեն Լուկաշ Սուլովսկին, ապա 12 օրյա այցով այստեղ էր Նիդերլանդների «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու մասնագետ Ջեննի Սպենսերը: Երկու հյուրերն էլ հիացած էին Երևանի կենդանաբանական այգու լանդշաֆտով: Լեհ մասնագետի կարծիքով, այն մեծացնելու, ինչպես նաև զարգացնելու մեծ հնարավորություններ կան: Լուկաշ Սուլովսկին նման եզրակացության էր հանգել՝ համեմատելով Պոտվոր բորենու հին վանդակն ու ներկայիս ազատավանդակը. «Երբ համեմատում ես բորենու ներկայիս 650 քառակուսի ազատավանդակն ու նախկին՝ հինգ քառակուսի մետր վանդակը, տեսնում ես հսկայական տարբերություն»: Լուկաշ Սուլովսկուն հատկապես դուր էր եկել Հայկական մուֆլոնների նոր ազատավանդակը, ինչը նրա գնահատմամբ, համապատասխանում է կենդանու կենսապայմանների ապահովման միջազգային բոլոր չափորոշիչներին: Նույն չափորոշիչներով գնահատելու դեպքում Լուկաշ Սուլովսկին անբավարար է համարում առյուծների ներկայիս պայմանները: Փոխարենը՝ նա վագրերի նոր կառուցվող ազատավանդակը համարում է գեղեցիկ, բնական և միջազգային չափանիշներին համապատասխան:



Ըստ Լուկաշ Սուլովսկու՝ Երևանի կենդանաբանական այգու հետ համագործակցելու ցանկությունը շատ մեծ է, և Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանի հետ մի շարք գաղափարներ քննարկելուց հետո ձեռնամուխ եղան վագրերի նոր ազատավանդակի համար արհեստական լեռնաբարերի կառուցմանը:

Ի տարբերություն Լուկաշ Սուլովսկու, Ջեննի Սպենսերն այլ առաքելությամբ էր Երևանի կենդանաբանական այգում: Ջեննին Հայաստանում էր այգու խնդիրներն ուսումնասիրելու, մասնագիտական խորհուրդներ տալու նպատակով: Նա 10 տարի աշխատել է «Բրիտոլի» կենդանաբանական այգում, որտեղ էլ մասնագիտացել է սողունագիտության մեջ: Այժմ ապրում է Նիդերլանդներում և համագործակցում «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու հետ, որն էլ աջակցում է Երևանի կենդանաբանական այգուն՝ EAZA-ի (Կենդանաբանական Այգիների և Ավարիումների Եվրոպական Ասոցիացիայից) չափորոշիչներին համապատասխանեցման գործընթացում:

Այցի ընթացքում սողունագետն առանձնահատուկ հետազոտել է կենդանիների շփման հնարավորությունները, անդակարգը: Ջեննին հիացած է Երևանի կենդանաբանական այգու գառնազդեղով. նշում է, որ շատ լավ պոտենցիալ կա այգում վերարտադրելու թռչնի այս տեսակը: Հիանալի գաղափար է համարում այգում իրականացվող «Կենդանիների խնամակալության» ծրագիրը և հաճելիորեն զարմացած է, որ այգու շատ խնամակալներ օտարերկրացիներ են: Ըստ Ջեննի Սպենսերի՝ կենդանիներին խնամակալելով՝ մարդիկ պատասխանատվությամբ են լցվում կենդանաբանական այգու նկատմամբ:

Երևանի կենդանաբանական այգին ձմռանը բաց է՝ իր այցելուների համար



Դեկտեմբերի 1-ից Երևանի կենդանաբանական այգին անցնում է ձմեռային ռեժիմի:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս, Երևանի կենդանաբանական այգին բաց կլինի իր այցելուների առջ, պարզապես ժամային փոքր տարբերությամբ:

Դեկտեմբերի 1-ից Երևանի կենդանաբանական այգին կաշխատի 10:00-ից մինչև 18:00-ը, (դրամարկը բաց կլինի 10:00-ից 17:30) իսկ տոնական, շաբաթ, կիրակի օրերին՝ 10:00-ից մինչև՝ 18:30-ը (դրամարկը բաց կլինի 10:00-ից մինչև 18:00):

Նշենք, որ Երևանի կենդանաբանական այգում ձմռան նախապատրաստման աշխատանքները սկսվել էին դեռևս 2013-ի օգոստոսին: Ուսումնասիրվել են այգու բոլոր բաժինների հիմնահարցերը, ձմռան հետ առնչվող աշխատանքները, որոնք ամբողջ ընթացքով իրականացվում են: Ընդլայնվել է նախորդ տարի անցկացված գազաֆիկացման ցանցը և բոլոր անտրաստը վայրերում առանձին տաքացուցիչներ են տեղադրվել: Գազաֆիկացումն իրականացվել է Երևանի քաղաքապետարանի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) հավելյալ ներդրումների արդյունքում դեռ 2011-ին:

